ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՏՆՕՐԵՆ՝ /Ս. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

30.08.2023թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ՀՐԱԶԴԱՆԻ N2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

ԴԱՍԱՐԱՆ՝ VI

ԴԱՍՂԵԿ՝Արմենուհի Սարգսյան

ԴԱՍԱՐԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Դասարանում սովորում է 24 սովորող, որոնցից՝ 12 տղա և 12 աղջիկ: Վեցերորդ դասարանը դպրոցի լավագույն դասարաններից է: Դասարանի սովորողներից հինգը՝ ունեն գերազանց առաջադիմություն, յոթը՝ լավ են սովորում, մնացածը՝ զիջում են իրենց առաջադիմությամբ:

Հարմարվել են բոլոր դասավանդող ուսուցիչներին, սիրով և մեծ պատասխանատվությամբ են կատարում իրենց պարտականությունները: Գիտեն իրենց իրավունքները, ազատ արտահայտում են իրենց տեսակետները: Դասարանում ձևավորված են բարի ավանդույթներ, որոնք իրականացվում են համատեղ ջանքերի արդյունքում: Ամուր է դասղեկ-աշակերտ-ուսուցիչ-ծնող կապը:

Դասարանում տիրում է առողջ հոգեբանական մթնոլորտ, սովորողների հարաբերություններում առկա է հարգանքը, սերը, հանդուրժողականությունն ու համերաշխությունը: Հարաբերություններում առաջնորդվում են միմյանց նկատմամբ վստահությամբ, փոխօգնությամբ և աջակցությամբ:

Պահպանվում են էթիկայի կանոնները, սովորողների մեծ մասը հաճախում են՝ երաժշտական, արվեստի, մարզական դպրոցներ: Գրանցել են բազմաթիվ հաջողություններ՝ նշված ոլորտներում: Աչքի են ընկնում իրենց գեղագիտական ճաշակով, ճկունությամբ և բազմակողմանի հետաքրքրասիրություններով:

Նոր ուսումնական տարում սովորողները առաջին անգամ մասնակցեցին Աշակերտական խորհրդի ձևավորման գործընթացին՝ հանդես գալով որպես պատասխանատու և սրտացավ սովորողներ: Դասարանում պահպանվում են դպրոցի ներքին կարգապահական կանոնները, բոլորը սիրով մասնակցում են դպրոցում իրականացվող դասարանական, համադպրոցական և արտադպրոցական միջոցառումներին:

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քաղաքացիական, բարոյական

Խնդիրները՝

Քաղաքացիական պատասխանատվության, արժանապատվության ձևավորում, հարգանք իր երկրի մշակույթի և պատմության հանդեպ, խթանել բարոյական վարքի ձևավորմանը:

Հոգևոր դաստիարակություն

Խնդիրները՝

Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:

Գեղագիտական դաստիարակություն

Խնդիրները՝

Զարգացնել գեղեցիկը տեսնելու, զգալու, ինչպես նաև ստեղծելու կարողություններ:

Ֆիզիկական առողջության

Խնդիրները՝

Ֆիզիկական զարգացմանն ուղղված պայմանների ստեղծում, վնասակար սովորությունների բացասական ազդեցությունների գիտակցում և օրինակելի վարքագծի դրսևորում, ֆիզիկական կոփմանն ուղղված միջոցառումների նախաձեռնում:

Աշխատանքային դաստիարակություն

Խնդիրները՝

Աշխատանքային հմտությունների և կառուցողական վերաբերմունքի խթանում:

Իրավական դաստիարակություն

Խնդիրները՝

Ձևավորել սեփական իրավունքներն ու պարտականությունները ճանաչելու կարողություններ:

Իրավական գիտակցության և հանդուրժողականության խթանում:

Էկոլոգիական դաստիարակություն

Խնդիրները՝

Բնության արժևորում և հոգատար վերաբերմունքի ձևավորում:

Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Խնդիրները՝

Զևավորել հայրենիքի նկատմամբ պատասխանատու վերաբերմունք՝ հիմնված անվերապահ սիրո և հարգանքի վրա, ակնածանք՝ հայ ազատամարտիկների նկատմամբ, ձգտում՝ կատարելու հայրենանվեր քայլեր:

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

	ԹԵՄԱՆ	ՕՐԸ
1.	Գիտելիքի և դպրության օր	01.09.2023.
2.	Իմ հարյուրամյա դպրոցի պատմությունը	04.09.2023
3.	Անկախ Հայաստանի անցած ճանապարհը	11.09.2023
4.	Մեր ընտանիքը	18.09.2023
5.	Շնորհավոր տոնդ, սիրելի՛ ուսուցիչ…	25.09.2023
6.	Մեր փոքրիկ բարեկամները	02.10.2023
7.	Ինչպես լինել լավ ընկեր	09.10.2023
8.	Ի՞նչ է ազնվությունը	16.10.2023
9.	Աշխատանքն ազնվացնում է մարդուն	30.10.2023
10.	Ու՞մ կուզեի նմանվել	06.11.2023
11.	Ի՞նչ եմ երազում	13.11.2023
12.	Ինչպ՞ես դրսևորել միջավայրում, տրանսպորտում	20.11.2023
13.	Երկրաշարժ 1988թ-ի Անմեղ զոհերի հիշատակին	27.11.2023
14.	Խնամքով օգտագործենք դասագրքերը	04.12.2023
15.	Ամանորը սպասված տոն է	11.12.2023
16.	Ազատամարտի հերոսները	18.12.2023
17.	Արցախցի իմ հասակակիցները	08.01.2024
18.	Մեր անունն է հայկական բանակ	15.01.2024
19.	Մեր հայրենիքը	22.01.2024
20.	Ուժեղ լինել նշանակում է…	29.01.2024
21.	Հեքիաթների մասին… Ես հավատում եմ…	05.02.2024
22.	Գալդ բարի՝ Գարու՛ն	12.02.2024
23.	Ճանաչենք մեր շրջապատի բնությունը, մաքրենք և գնահատենք	19.02.2024
24.	Մա՛յր իմ անուշ ու անգին	26.02.2024
25.	Պատվիրանների խորհուրդը	04.03.2024
26.	Ճանաչենք և պահպանենք մեր շրջապատի	11.03.2024

	հուշարձանները	
27.	Մայրության և գեղեցկության տոնը	18.03.2024
28.	Սիրել և հարգել հայ Առաքելական եկեղեցին	01.04.2024
29.	Հայը պետք է ապրի և արարի	08.04.2024
30.	Հայոց ցեղասպանության 108-րդ տարելիցը	15.04.2024
31.	Առողջ հոգի առողջ մարմնում	22.04.2024
32.	Մայիսյան հերոսամարտեր	29.04.2024
33.	Ինչպե՞ս եմ անցկացնելու ամառը	06.05.2024
34.	Տարեվերջյան էքսկուրսիա	13.05.2024

ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆԵՐ

	ՆՊԱՏԱԿԸ	ԷՔՍԿՈՒՐՍԻԱՅԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ /նշել կետերով/	ՕՐԸ
1.		Դեպի մայրաքաղաք Երևան. 1.Մ.Մաշտոցի անվան մատենադարան 2.Երկրաբանական թոնգարան 3.Պատանի հանդիսատեսի թատրոն 4.Միասին միևնույն սեղանի շուրջ	28.09.2023թ.

ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

	ԹԵՄԱՆ	ՕՐԸ
2.	<<Գյումրին երգ ունի, Գյումրին վերք ունի>>	08.12.2023թ.
3.	Մեր հույսերի Ամանորը	22.12.2023թ.
4.	Իմ քաջարի հա՛յ զինվոր	29.02.2024թ.

ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

	ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1	ՕՐԸ
ՕԳՈՍՏՈՍ	ՕՐԱԿԱՐԳ 1.Ծնողխորհրդի վերընտրում 2.Դասագրքերով ապահովվածությունը և վարձավճարները 3.Ընդհանուր կազմակերպչական հարցեր	28.08.2023թ.

	ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2	ՕՐԸ

ՍԵՊՏԵՄԲԵՐ	ՕՐԱԿԱՐԳ ՕՐԱԿԱՐԳ 1.Ծնողխորհրդի վերընտրում 2.Դասագրքերով ապահովվածությունը և վարձավճարները 3.Սովորողների պատրաստվածությունը դասապրոցեսին 4.Ընդհանուր կազմակերպչական հարցեր	20.09.2023թ.

ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐ

Հայաց	Օրը	Առարկան, դասավանդող ուսուցիչը	Դասի թեման	Դասալսման նպատակը
1.	07.09.2023.	Ա.Խոսրովյան <<Մայրենի>>	Հատվածի գեղարվեստական և բարոյական արժեքը:	Պոտրաստվածությունը՝ դասի:
2.	11.09.2023.	Ա.Ավագյան <<Մաթեմատիկա>>	Համեմատություն:	Պատրաստվածությունը՝դասի:
3.	20.09.2023.	Ն.Ղարիբյան <<<Հայոց Պատմություն>>	Հայկական լեռնաշխարհի գետերն ու լճերը:	Սովորողների հետաքրքրվածությունը և հայոց պատմության կարևորությունը:
4..	27.09.2023.	Ա.Խոսրովյան <<Մայրենի>>	Հովհ.Ծիրագ, <<<Հորս հիշատակին>> բանաստեղծությունը:	Պատրաստվածությունը՝ դասին:
5.	27.09.2023.	Ա.Ավագյան <<Մաթեմատիկա>>	Խնդիրներ տոկոսի վերաբերյալ:	Ինչպե՞ս են ընկալում և կատարում մաթեմատիկակա խնդիրները:
6.	27.09.2023.	Ն.Ղարիբյան <<<Հայոց Պատմություն>>	Հայաստանի պատմավարչական բաժանումները:	Հայոց պատմության կարևորությունը:
7.	03.10.2023.	Ի.Գրիգորյան <<Բնագիտություն>>	Առօրյա կյանքում հանդիպող օրգանական նյութեր:	Սովորողների պատրաստվածությունը դասին:
8.	06.10.2023	Ա.Ավագյան <<Մաթեմատիկա>>	Տրված պայմաններին բավարարող իրավիճակների ելքերի քանակի հաշվում:	Սովորողների տնային հանձնարարություններին պատրաստվածությունը:

ՀԱՄԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑՈՒՄ